

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020



CRRC
Armenia



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր	02
Մեթոդաբանություն	04
Հարցվածների սոցիալ-տնտեսական նկարագիր	06
Առողջապահություն	11
Էներգետիկա	22
Ղարաբաղյան հակամարտության կարգավորում	30
Կրթություն	36
Եզրակացություն	42
Հավելված 1	45

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համար չորս գերակա ոլորտների (առողջապահություն, էներգետիկա, դարաբաղյան հակամարտություն և կրթություն) վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից՝ Սիվիլիթաս հիմնադրամի պատվերով: Տվյալները հավաքագրվել են 2020 թ. օգոստոսի 15-ից 29-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսային (CATI) և վեբ (CAWI) հարցազրույցների միջոցով: Հարցմանը մասնակցել են 18 և բարձր տարիքի 1100 ՀՀ քաղաքացիներ:

Առողջապահություն: Ստացված տվյալների համաձայն, հարցվածների 44%-ը նոր կորոնավիրուսը համարում է սպառնալիք մարդկանց կյանքին: Հարցվածների 76%-ի կարծիքով, համավարակի պայմաններում կառավարության համար առաջնահերթ պետք է լինի առողջապահությունն ու բնակչության առողջությունը՝ նույնիսկ ի վնաս տնտեսության:

Կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում, հարցվածների կեսից ավելին (55%) կանցնի կորոնավիրուսի թեստ, նույնիսկ եթե այն վճարովի լինի: Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու պարագայում, հարցվածների 56%-ը անձամբ չի դիմի պատվաստման համար: Պատվաստման համար չդիմելու հիմնական պատճառը պատվաստանյութերի հանդեպ անվստահությունն է:

Էներգետիկա: Հարցվածների 60%-ն իր տնային տնտեսությունում էներգետիկ ծախսերի հիմնական աղբյուր է համարում կենցաղային էլեկտրասարքերը, 33%-ը՝ լուսավորող սարքերը, և 30%-ը՝ ջեռուցման համակարգերը¹: Տնային տնտեսությունների կողմից ջեռուցման համար առավել շատ օգտագործվող էներգիայի աղբյուրը գազն է (60%), որին հաջորդում են փայտը (23%) և էլեկտրականությունը (15%): Գյուղական համայնքներում ջերմություն ստանալու համար առավել հաճախ օգտագործվող վառելանյութը փայտն է:

Հայաստանցիների կեսը կենցաղային սարքավորումներ գնելիս ուշադրություն չի դարձնում սարքի էներգետիկ պիտակին: Վերականգնվող էներգիայի օգտագործման մակարդակը Հայաստանի տնային տնտեսություններում ցածր է. հարցման մասնակիցների 91%-ը չի կիրառում վերականգնվող էներգիայի սկզբունքով աշխատող որևէ սարքավորում:

¹ Հարցվածները հնարավորություն են ունեցել ընտրելու մեկից ավելի պատասխան:

Հարցվածների 76%-ը չգիտի վերականգնվող էներգիայի կիրառությունը խթանող որևէ օրենսդրական կարգավորման մասին:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորում: Հարցված հայաստանցիների 60%-ը լիովին համաձայն է, որ ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի ոչ թե ռազմական ուժի, այլ բանակցությունների միջոցով: Հարցվածների մոտ կեսը (47%) լիովին համաձայն է, որ ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում Հայաստանը հույսը պետք է դնի միայն իր վրա: Հարցվածների միայն մեկ երրորդն է հնարավոր համարում կարգավորման այնպիսի տարբերակ, որը միաժամանակ ընդունելի լինի Հայաստանի, Արցախի և Ադրբեյջանի ժողովուրդների համար: Հարցվածներից 39%-ի կարծիքով, ղարաբաղյան հակամարտության կարգավորումը կախված է Հայաստանի, իսկ 31%-ի կարծիքով՝ Ադրբեյջանի կառավարություններից: Հարցվածների ավելի փոքր բաժինն է հակամարտության կարգավորումը կապում արտաքին խաղացողների կամքի հետ: Հարցված հայաստանցիների մոտ երկու երրորդի կարծիքով, ժողովուրդներին հնարավոր է խաղաղության նախապատրաստել:

Կրթություն: Հեռավար կրթությանն առնչություն ունեցած հարցվածների երեք քառորդից ավելին (79%) համավարակի ժամանակ մասնակցել է հեռավար դասերին: Հեռավար դասերին մասնակցած հարցվածների ամենամեծ բաժինը (42%) դասերին մասնակցելու ամենամեծ խոչընդոտը համարել է ինտերնետի բացակայությունը/ցածր որակը: Հեռավար դասերին մասնակցած հարցվածների կեսից ավելին նշել է, որ դասը/դասախոսությունը հեռավար լինելու պատճառով բովանդակային փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես, դասավանդողները շեշտն ավելի շատ ինքնուրույն աշխատանքի և որոշ առաջադրանքների կրճատման վրա են դրել: Հարցվածների 41%-ը հեռավար կրթության մեջ առավելություններ չի տեսնում: Հարցվածների կեսից ավելին հեռավար կրթությունը չի դիտարկում որպես նոր հմտություններ ստանալու հնարավորություն: Ավելին, հարցվածների 65%-ը չէր ցանկանա համավարակից հետո հեռավար կրթության տարրեր տեսնել դասապրոցեսում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության հարցաթերթ

ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության հարցաթերթը մշակվել է Սիվիլիթաս հիմնադրամի փորձագետների և վերանայվել ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտական թիմի կողմից: Նախքան տվյալների հավաքագրումը, հարցաթերթը փորձարկել են 4 հարցազրուցավարներ՝ 15 պիլոտային հարցազրուցների միջոցով: Փորձարկման արդյունքում հարցաթերթը լրամշակվել է: Այն ներառում է 50 հարց և կազմված է հետևյալ հինգ բաժիններից՝

- Առողջապահություն
- Էներգետիկա
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորում
- Կրթություն
- Հարցվածների սոցիալ-տնտեսական նկարագիր:

Հարցման մեթոդ և դաշտային աշխատանքներ

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2020թ. օգոստոսի 15-ից 29-ն ընկած ժամանակահատվածում: Հարցվել է 1100 ՀՀ չափահաս բնակիչ (95% վստահության սահմաններում, 3% սխալի թույլատրելի շեղումով): Հարցումն իրականացվել է հեռախոսային (CATI) և վեբ (CAWI) հարցազրույցների համադրությամբ: Հարցվածների հետ կապ հաստատելու համար օգտագործվել է պատահական հեռախոսահամարների գեներացման մեթոդը: Ի սկզբանե պատահականորեն գեներացված 10 000 բջջային հեռախոսահամարի (բաշխումն ըստ յուրաքանչյուր օպերատորի օգտատերերի թվի համամասնության) ուղարկվել է կարճ հաղորդագրություն, որին կցված է եղել հարցաթերթի առցանց տարբերակը, որը բաժանորդները կարող էին լրացնել: Այս ճանապարհով ստացվել է ընդամենը 10 լրացված հարցաթերթ (CAWI): Մնացած 1090 հարցազրույցն իրականացվել է հեռախոսային հարցման միջոցով: Կարճ հաղորդագրության ծառայության (SMS) միջոցով հնարավոր է եղել այդ 10 000 պատահականորեն գեներացված հեռախոսահամարներից առանձնացնել գործող համարները և զանգահարել: Ցանկի համարները սպառելուց հետո գեներացվել են լրացուցիչ հեռախոսահամարներ: Արդյունքում իրականացվել է 7423 հեռախոսազանգ, որից հարցմամբ է ավարտվել 15%-ը (*Աղյուսակ 1*): Հարցազրույցների միջին տևողությունը կազմել է 22 րոպե:

Աղյուսակ 1: Իրականացված և արդյունավետ զանգերի բաշխումը ըստ բջջային օպերատորների

	Չանգերի ընդհա- նուր թիվը	Չստաց- ված զանգերի թիվը*	Հաջող- ված զանգերի թիվ	Մերժում- ների թիվը	Կայացած հարցագ- րույցների թիվը	Հաջող- ված զանգերը **	Կայացած հարցագ- րույցները ***
ՎիվաՍել- USU	6059	3884	2175	1211	964	36%	44%
ՎեՆՆ Արմենիա	953	663	290	179	111	30%	38%
Յուքոմ	411	334	77	52	25	19%	32%
Ընդամենը	7423	4881	2542	1442	1100	34%	43%

* Ներառում է այն զանգերը, երբ հնարավոր չի եղել կապ հաստատել, համարը գոյություն չի ունեցել, սխալ է եղել, անջատված է եղել, կամ պարզապես բաժանորդը չի պատասխանել

** Հաջողված զանգերի հարաբերակցությունն զանգերի ընդհանուր թվին

*** Կայացած հարցազրույցների հարաբերակցությունն հաջողված զանգերի թվին

Դաշտային աշխատանքներին մասնակցել է ՀՌԿԿ-Հայաստանի 21 հարցազրուցավար: Մինչ դաշտային աշխատանքների սկիզբը նրանք մասնակցել են իրահանգավորման, որի ընթացքում ծանոթացել են հարցաթերթին: Բոլոր հարցազրուցավարներն ունեցել են հեռախոսային հարցումներ իրականացնելու փորձ:

Դաշտային աշխատանքների վերահսկողությունն իրականացվել է ՀՌԿԿ-Հայաստանի տվյալների հավաքագրման թիմի կողմից: Տվյալների հավաքագրումն ամենօրյա ռեժիմով ենթարկվել է մոնիթորինգի: Կայացած հարցազրույցների 10%-ի ձայնագրությունները լսվել են որակի վերահսկման թիմի կողմից: Խնդիրներ բացահայտելու դեպքում, թիմն անմիջապես կապ է հաստատել հարցազրուցավարների հետ, և խնդիրը կարճ ժամանակում շտկվել է:

Հետազոտության արդյունքները ներկայացված են չկշռված տվյալների հիման վրա:


Ծանոթություն 1. գծապատկերներում, եթե այլ նշում չկա, բերված են բոլոր պատասխանները՝ արտահայտված տոկոսներով ամբողջի մեջ: Այն դեպքերում, երբ հարցվածները հնարավորություն են ունեցել տալու մկեից ավելի պատասխան, տոկոսների հանրագումարը գերազանցում է հարյուրը, ինչը հարցադրման և հաշվարկի առանձնահատկությունն է, ոչ թե թվաբանական սխալ: Չեկույցում ներկայացված որոշ գծապատկերների տոկոսների հանրագումարի 1% շեղումը պայմանավորված է տոկոսների կլորացված ներկայացմամբ:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՐՑՎԱՃՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցման մասնակիցների 54%-ը կազմել են կանայք, 46%-ը՝ տղամարդիկ: Հարցվածների շրջանում փոքր-ինչ գերակշռել են 18-35 տարիքային խմբի ներկայացուցիչները. նրանց բաժինը կազմել է 40%, 36-55 տարեկաններինը՝ 33% և 56+ տարիքային խմբի հարցվածներինը՝ 27%: Երևանից և գյուղական համայնքներից հարցվածների բաժինը գրեթե նույնն է՝ 36% և 35% համապատասխանաբար: Այլ քաղաքային համայնքներից հարցվածները կազմել են 29%-ը: Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը (71%) ամուսնացած է եղել (*Գծապատկեր 1.1*):

Գծապատկեր 1.1. Հարցվածների սեռը, տարիքը, ընտանեկան կարգավիճակը և բնակության վայրը


n = 1100



Ինչպես երևում է *Գծապատկեր 1.2-ից*, հարցվածների 34%-ն ունի բարձրագույն կրթություն, 33%-ը՝ լրիվ միջնակարգ կրթություն, իսկ միջնակարգ տեխնիկական կրթություն ունեցող հարցվածների բաժինը կազմել է 22%:

Գծապատկեր 1.2. Ո՞րն է Ձեր ամենաբարձր կրթամակարդակը


n = 1100



Հարցման մասնակիցների կեսից ավելին (56%) աշխատում է, մասնավորապես, 46%-ն ունի ամբողջ դրույքով աշխատանք, ներառյալ՝ ինքնազբաղվածությունը, իսկ 10%-ն աշխատում է կես դրույքով, ներառյալ՝ ինքնազբաղվածությունը: Հարցվածների միայն 11%-ն է, որ չի աշխատում և փնտրում է աշխատանք (*Գծապատկեր 1.3*):


Գծապատկեր 1.3. Ձեր զբաղվածության կարգավիճակը

n = 1100



Հայաստանի տնային տնտեսությունները հիմնականում բաղկացած են 4 անդամից, որտեղ երկուսը չափահաս են, իսկ երկուսը անչափահաս կամ չորս անդամն էլ չափահաս: Հարցվածների 25%-ը նշել է, որ միջին հաշվով իրենց տնային տնտեսության ամսական ծախսերը կազմում են 50.001–120.000 ՀՀ դրամ, իսկ 28%-ը՝ 120.001–200.000 ՀՀ դրամ: Հարցվածների միայն 6%-ն է նշել, որ միջին հաշվով իրենց տնային տնտեսության ամսական ծախսերը չեն գերազանցում 50.000 ՀՀ դրամը (*Գծապատկեր 1.4*):


Գծապատկեր 1.4. Միջին հաշվով որքա՞ն են կազմում Ձեր տնային տնտեսության ամսական ծախսերը
n = 1100



Համաձայն *Գծապատկեր 1.5-ի*, հարցվածների մոտ մեկ երրորդը (35%) նշել է, որ տնային տնտեսության գումարը հիմնականում բավարար է սննդի ու հագուստի համար, բայց ոչ թանկարժեք ապրանքների համար: Հարցվածների 31%-ի համար գումարը բավարար է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար, իսկ 14%-ը չունի բավարար գումար նույնիսկ սննդի համար: Հարցվածների միայն 13%-ի համար է գումարը բավարար թանկարժեք կենցաղային ապրանքներ գնելու համար:

Գծապատկեր 1.5. Այս իրավիճակներից ո՞րն է առավել լավ բնութագրում Ձեր տնային տնտեսության ներկայիս տնտեսական վիճակը

n = 1100




ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ



ԲԱԺԻՆ 2. ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանցիների 44%-ը համարում է, որ Նոր տեսակի կորոնավիրուսը գլոբալ հավարակ է և սպառնալիք միլիոնավոր մարդկանց կյանքի և առողջության համար: Ընդ որում, բարձրագույն կրթություն ունեցողների 49%-ն է այդպես կարծում է, իսկ միջնակարգ կրթություն ունեցողների՝ 40%-ը²: Մինևույն ժամանակ, հարցվածների 7%-ը նշել է, որ Նոր տեսակի կորոնավիրուսը հորինված է լրատվամիջոցների և հասարակական գործիչների կողմից (Գծապատկեր 2.1):

Գծապատկեր 2.1. Թվարկվածներից ո՞րն է առավելապես արտահայտում Կորոնավիրուսի վերաբերյալ Ձեր կարծիքը
n = 1100




² χ^2 (df = 5, N = 1100) = 21.754, p = .001

Հարցվածների կեսից ավելին (57%) ճանաչում է որևէ մեկին, որը 2020 թ. մարտից հետո Հայաստանում հիվանդացել է կամ հիվանդ է նոր կորոնավիրուսով. ընդ որում, ճանաչողների շրջանում վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չկան ո՛չ ըստ սեռերի, և ո՛չ ըստ տարիքային խմբերի: Հարցման մասնակիցների 20%-ն անձամբ չի լսել որևէ մեկի մասին, որը 2020 թ. մարտից հետո Հայաստանում հիվանդացել է կամ հիվանդ է նոր կորոնավիրուսով:

Գծապատկեր 2.2. Անձամբ լսե՞լ/ճանաչու՞մ եք որևէ մեկին, ով 2020թ. մարտից հետո Հայաստանում հիվանդացել է կամ հիվանդ է կորոնավիրուսով:


n = 1100



Հարցվածների ճնշող մեծամասնությունը (76%) գտնում է, որ համավարակի պայմաններում կառավարության համար առաջնահերթ պետք է լինեն առողջապահությունն ու բնակչության առողջությունը, չնայած այն հանգամանքին, որ կտուժի տնտեսությունը (Գծապատկեր 2.3):

Գծապատկեր 2.3. Երբ անհրաժեշտ է ընտրություն կատարել կորոնավիրուսի համավարակի պայմաններում, ի՞նչը պետք է առաջնահերթ լինի կառավարության համար:


n = 1100



Համաձայն *Գծապատկեր 2.4-ի*, հարցման մասնակիցների 39%-ը գտնում է, որ համավարակի ընթացքում կառավարության կողմից կիրառված միջոցները համարժեք են, իսկ իրավիճակը՝ կառավարելի: Ընդ որում, առկա է վիճակագրորեն նշանակալի տարբերություն ըստ տարիքային խմբերի. 56+ տարիքային խմբի հարցվածներն ավելի են հակված այդպես մտածելու, ի տարբերություն 18-35 տարեկան հարցվածների (համապատասխանաբար՝ 46% և 36%)³: Մինևույն ժամանակ, հայաստանցիների մոտ մեկ երրորդը (32%) նշել է, որ կառավարությունն ամեն ինչ ճիշտ է արել, բայց՝ ուշացումով, իսկ 11%-ը գտնում է, որ կառավարությունը կորցրել է իրավիճակի վերահսկողությունը, և համարժեք միջոցներ չեն ձեռնարկվել:

Գծապատկեր 2.4. Ինչպե՞ս կբնութագրեք կառավարության գործունեությունը համավարակի տարածման ընթացքում

n = 1100




Հարցվածները կառավարության գործունեությունը տարբեր կերպ են գնահատում նաև կախված բնակության վայրից: Այսպես, եթե երևանցիների միայն 35%-ն է գտնում, որ իրավիճակը վերահսկելի է և կիրառված միջոցները համարժեք են, ապա այլ քաղաքների և գյուղերի բնակիչների 43%-ը⁴:

³ χ^2 (df = 12, N = 1100) = 28.472, p = .005

⁴ χ^2 (df = 12, N = 1100) = 29.374, p = .003


Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 2.5*-ը, հարցված հայաստանցիների մոտ երկու երրորդը (68%) բավարարված է Հայաստանի Առողջապահության նախարարության աշխատանքով («Միանշանակ այո» և «Ավելի շուտ այո» պատասխանների հանրագումարը): Հարցվածների միայն 10%-ը բոլորովին գոհ չէ Առողջապահության նախարարության աշխատանքից:

Գծապատկեր 2.5. Բավարարված եք արդյո՞ք Հայաստանի Առողջապահության նախարարության աշխատանքով
n = 1100



Հարցված հայաստանցիների մոտ երեք քառորդը (74%) նշել է, որ արտակարգ դրության ամբողջ ընթացքում պահպանել է արտակարգ դրության կանոնները: Հարցվածների 2%-ը հայտնել է, որ կանոնները պահպանելու հնարավորություն չունի, իսկ 4%-ը կանոնները պահպանելու անհրաժեշտություն չի տեսնում (*Գծապատկեր 2.6*):


Գծապատկեր 2.6. Հայաստանում արտակարգ դրություն է հայտարարված: Դուք պահպանու՞մ եք արտակարգ դրության կանոնները
n = 1100



Այնուամենայնիվ, ինչպես երևում է *Գծապատկեր 2.7*-ից, հարցման մասնակիցների կեսից ավելին (53%) գտնում է, որ Հայաստանի բնակչությունը կարգապահ չէ համավարակի ընթացքում («Ավելի շուտ կարգապահ չեն» և «Բնավ կարգապահ չեն» պատասխանների հանրագումարը): Հարցվածների միայն 7%-ն է կարծում, որ Հայաստանի բնակչությունը շատ կարգապահ է համավարակի ընթացքում:

Գծապատկեր 2.7. Ինչպե՞ս կբնութագրեք Հայաստանի բնակչության վարքագիծը համավարակի ընթացքում


n = 1100



Նոր կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում, հարցված հայաստանցիների 34%-ը հայտնել է, որ առաջին հերթին կգնա պոլիկլինիկա կամ հիվանդանոց, իսկ 31%-ը՝ կինքնամեկուսանա: Հարցվածների միայն 19%-ն է նշում, որ կգանգի պոլիկլինիկա, թեժ գիծ, հիվանդանոց կամ շտապօգնություն: Ընդ որում, հիվանդության կասկածի դեպքում գործողությունների ընտրության առումով, հարցվածները չեն տարբերվում ըստ սեռի, տարիքի, բնակության վայրի և կրթական մակարդակի (*Գծապատկեր 2.8*):

Գծապատկեր 2.8. Առաջին հերթին ինչպե՞ս կվարվեք, եթե կասկածեք, որ հիվանդացել եք կորոնավիրուսով


n = 1100



Հարցվածների ճնշող մեծամասնությունը (71%) հայտնել է, որ նոր կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում կանցնի կորոնավիրուսի թեստ, ընդ որում 55%-ը կանցնի, նույնիսկ եթե թեստը վճարովի լինի: Երիտասարդներն ավելի հակված են թեստ հանձնելու, նույնիսկ եթե վճարովի լինի (18-35 տարեկանների 59%-ը), քան տարիքով ավագները (56+ տարեկանների՝ 49%-ը)⁵: Հարցման մասնակիցների 13%-ը չի վստահում թեստավորմանը և թեստ չի հանձնի:

Գծապատկեր 2.9. Կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում կանցնե՞ք կորոնավիրուսի թեստ

n = 1100




⁵ χ^2 (df = 10, N = 1100) = 44.606, p = .000

Ըստ *Գծապատկեր 2.10*-ի, կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի հայտնաբերման պարագայում հարցված հայաստանցիների կեսից ավելին (56%) անձամբ չեն դիմի պատվաստման համար: Ընդ որում, կանայք ավելի քիչ են հակված պատվաստվելու (23%) քան տղամարդիկ (39%)⁶ (*Գծապատկեր 2.11*): Առկա է վիճակագրորեն նշանակալի տարբերություն նաև տարիքային խմբերի միջև: Այսպես, երիտասարդներն ավելի քիչ են հակված անձամբ դիմելու պատվաստման համար (27%), քան 56+ տարիքային խմբի հարցվածները (38%)⁷: Մինևոլյն ժամանակ, 13%-ը դժվարանում է պատասխանել, արդյոք անձամբ կդիմի պատվաստման համար կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու պարագայում:


Գծապատկեր 2.10. Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու պարագայում Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար

n = 1100



Գծապատկեր 2.11. Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու պարագայում Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար, ըստ սեռի

n = 1100




Ինչպես երևում է *Գծապատկեր 2.12*-ից, հարցվածների 49%-ը չի պատրաստվում դիմել պատվաստման համար, քանի որ ընդհանրապես չի վստահում պատվաստանյութերին: Պատվաստվելու մտադրություն չունեցողների ևս 44%-ը չի դիմի պատվաստման համար մինչև չլինեն տվյալ պատվաստանյութի անվտանգության երաշխիքները:

⁶ χ^2 (df = 3, N = 1100) = 31.483, p = .000

⁷ χ^2 (df = 6, N = 1100) = 20.182, p = .003

Գծապատկեր 2.12. Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու պարագայում Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար: Եթե ոչ, ապա ինչու՞


n = 619



Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու դեպքում պատվաստվելու մտադրություն ունեցող հարցվածների ճնշող մեծամասնությունը (80%) պատվաստվել ցանկանում է հիվանդանալու վտանգից ապահովագրվելու նպատակով, մինչդեռ նրանց 17%-ի կարծիով, պատվաստումը կլինի պարտադիր բոլորի համար (Գծապատկեր 2.13):

Գծապատկեր 2.13. Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի ի հայտ գալու պարագայում Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար: Եթե այո, ապա ինչու


n = 334



Հարցման մասնակիցների մոտ երկու երրորդը (64%) Հայաստանում կորոնավիրուսի տարածմանը վերաբերող հիմնական տեղեկատվությունը ստանում է հեռուստացույցով, ռադիոյով և տպագիր մամուլով: Հարցվածների 46%-ն այդ տեղեկատվությունը ստանում է հևտերներից (լրատվակայքեր, թերթերի կայքեր և սոցցանցերում դրանց էջեր): Վարչապետի, առողջապահության նախարարի, այլ պաշտոնատար անձանց էջերի ուղիղ եթերներից և հրապարակումներից տեղեկատվություն ստանում է միայն 27%-ը: Հարցման մասնակիցների 4%-ը նշել է, որ չի հետևում Հայաստանում կորոնավիրուսի տարածման հետ կապված տեղեկատվությանը (*Գծապատկեր 2.14*):

Գծապատկեր 2.14. Որտեղի՞ց եք ստանում Հայաստանում Կորոնավիրուսի հետ կապված հիմնական տեղեկատվությունը: [Ընտրեք բոլոր հնարավոր պատասխանները] (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)


n = 1100




Հարցված հայաստանցիների կեսից ավելին (51%) ՀՀ վարչապետի ուղիղ եթերները և հրապարակումները համարում է կորոնավիրուսի վերաբերյալ տեղեկատվական ամենավստահելի աղբյուրը: Հայաստանյան բժիշկների և փորձագետների կողմից տրվող տեղեկատվությունն ամենավստահելին է համարում հարցվածների 45%-ը: Առողջապահության նախարարության և այլ պետական գերատեսչությունների պաշտոնական հաղորդագրություններին լիովին վստահում է հարցվածների 36%-ը (*Գծապատկեր 2.15*):

Գծապատկեր 2.15. Նշեք խնդրեմ, Կորոնավիրուսի հետ կապված հետևյալ տեղեկատվական աղբյուրների նկատմամբ Ձեր վստահության աստիճանը 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես չեմ վստահում, իսկ 5-ը՝ լիովին վստահում եմ:

n = 1100



ԷՆԵՐԳԵՏԻԿԱ




ԲԱԺԻՆ 3. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 3.1-ը*, հարցվածների 38%-ը նշել է, որ իր տնային տնտեսության էներգիայի սպառման ծախսը շատ չի տարբերվում այլ տնային տնտեսությունների համեմատ, մինչդեռ 25%-ի գնահատականով իր տնային տնտեսության ծախսն ավելի շատ է:

Գծապատկեր 3.1. Ձեր կարծիքով, Ձեր ընտանիքի էներգիայի (գազ, էլեկտրաէներգիա) ծախսը, հարևանների/մտերիմների ընտանիքների համեմատ...


n=1100



Հարցման մասնակիցների 92%-ը կցանկանար, որ իր ընտանիքի էներգետիկ ծախսերը նվազեն (*Գծապատկեր 3.2*): Սակայն, հարցվածների միայն 42%-ն է նշել, որ երբևէ մտածել է որևէ բան ձեռնարկել կացարանի էներգետիկ ծախսերը կրճատելու ուղղությամբ (*Գծապատկեր 3.3*): Ընդ որում պատկերը նույնն է անկախ հարցվածների տնտեսական կարգավիճակից և բնակավայրի տեսակից:


Գծապատկեր 3.2. Կցանկանալի՞ք, որ Ձեր ընտանիքի էներգետիկ ծախսերը նվազեին

n=1100



**Գծապատկեր 3.3. Երբևէ մտածե՞լ եք որևէ բան ձեռնարկել Ձեր կացարանի
Էներգետիկ ծախսերը կրճատելու համար**


n=1100



Հարցման մասնակիցների 60%-ը նշել է, որ իր տնային տնտեսությունում Էներգետիկ ծախսերի հիմնական աղբյուրը կենցաղային էլեկտրասարքերն են, 33%-ը՝ լուսավորող սարքերը, և 30%-ը՝ ջեռուցման համակարգը: Հարցվածների 10%-ը և 8%-ը նշել են, որ իրենց տնային տնտեսությունների Էներգետիկ ծախսերի գոյացման հիմնական աղբյուրը ջերմության արտախոսքն է պատերից և պատուհաններից՝ համապատասխանաբար (Գծապատկեր 3.4):

**Գծապատկեր 3.4. Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր ընտանիքի Էներգետիկ
ծախսերի գոյացման հիմնական աղբյուրները (Հարցվողները ընտրել են ցանկից:
Պատասխանները միավորված են:)**


n=1100




ՏՆ իռավել
շատ օգտագործվող Էներգիայի աղբյուրը հանդիսանում է գազը. հարցվածների

60%-ը նշել է, որ օգտագործում է գազով ջեռուցման կաթսա: Հարցվածների 23%-ը նշել է, որ օգտագործում է փայտ, 15%-ը՝ էլեկտրական տաքացուցիչներ: Գյուղական համայնքներում փայտը նշվել է որպես առավել հաճախ օգտագործվող վառելանյութ ջերմության ստանալու համար (43%): Երկրորդ տեղում գազն է (39%), որին հաջորդում է գոմաղբը (19%): Երևանում ջեռուցման համար փայտանյութ սպառում է հարցվածների 5%-ը, իսկ գազով ջեռուցման կաթսաներ օգտագործում են 73%-ը: Եթե էլեկտրական տաքացուցիչներն օգտագործում են Երևանի բնակիչների 24%-ը, ապա գյուղական համայնքներում այս ցուցանիշը 9% է (Գծապատկեր 3.6):

Գծապատկեր 3.5. Ինչպե՞ս եք ջեռուցում Ձեր կացարանը
(Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)
n=1100




Գծապատկեր 3.6. Ինչպե՞ս եք ջեռուցում Ձեր կացարանը
(Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)
n=1100



Չնայած այն հանգամանքին, որ հարցվածների մեծամասնությունը նշել է, որ երբևէ չի մտածել իր կացարանի էներգետիկ ծախսերը կրճատելու մասին (*Գծապատկեր 3.3*), այնուամենայնիվ, գործողությունների մակարդակում իրավիճակն այլ է: Ըստ *Գծապատկեր 3.7-ի*, հարցման մասնակիցների գրեթե երեք քառորդը (72%) նշել է առնվազն մեկ միջոցառում, որն իրականացրել է իր կացարանում էներգետիկ ծախսերի կրճատման ուղղությամբ: Օրինակ՝ տնային տնտեսությունների 50%-ն իրականացրել է պատուհանների փոխարինում, 36%-ը՝ լամպերի փոխարինում, 35%-ը՝ դռների փոխարինում, իսկ 33%-ը՝ կենցաղային էլեկտրասարքավորումների փոխարինում: Պատերի ջերմամեկուսացում իրականացրել է հարցվածների 18%-ը:

Գծապատկեր 3.7. Ստորև նշված միջոցառումներից որո՞նք եք իրականացրել Ձեր կացարանում (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)

n=1100




Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 3.8-ը*, հարցվածների 47%-ի կարծիքով, տանը էներգիա խնայելու համար հարկավոր է անջատել ոչ անհրաժեշտ լուսավորությունը, 42%-ի կարծիքով՝ անջատել չգործածվող էլեկտրասարքերը, իսկ 25%-ի կարծիքով՝ նվազեցնել գերջեռուցումը/գերհովազումը:

Գծապատկեր 3.8. Նշված գործողություններից ո՞րը կնպաստի Ձեր տանը Էներգիա խնայելուն

(Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)


n=1100



Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 3.9-ը*, հարցվածների ուղիղ կեսը (անկախ կրթության մակարդակից) կենցաղային սարքավորումներ գնելիս ուշադրություն չի դարձնում սարքի էներգետիկ պիտակին, մինչդեռ 6%-ը նշում է, որ չգիտի, թե դա ինչ է:

Գծապատկեր 3.9. Կենցաղային սարքավորումներ (լվացքի մեքենա, սառնարան, հեռուստացույց, և այլն) գնելիս ուշադրություն դարձնո՞ւմ եք սարքի էներգետիկ պիտակին:


n=1100



Վերականգնվող էներգիայի օգտագործման մակարդակը Հայաստանում բարձր չէ. համաձայն *Գծապատկեր 3.10-ի*, հարցման մասնակիցների 91%-ն իր տնային տնտեսությունում չի կիրառում վերականգնվող էներգիայի սկզբունքով աշխատող որևէ սարքավորում: Հարցվածների 5%-ը (նրանց մեծ մասը՝ գյուղական համայնքներում) նշել է, որ կիրառում է արևային ջրատաքացուցիչ, 2%-ը կենսագազի ստացման սարք և մեկական տոկոսը՝ արևային ֆոտոէլեկտրական վահանակ և ջերմային պոմպ:

Գծապատկեր 3.10. Ձեր տնային տնտեսությունում վերականգնվող էներգիայի սկզբունքով աշխատող ո՞ր սարքավորումներն եք կիրառում


n=1100



Հայաստանցիների 76%-ը ծանոթ չէ վերականգնվող էներգիայի կիրառությունը խթանող օրենսդրական կարգավորումներին, որոնք գործում են Հայաստանում (*Գծապատկեր 3.11*): Հարցվածների ընդամենը 36%-ն է նշել, որ Հայաստանն ունի էներգետիկ անվտանգության խնդիր, իսկ 23%-ը չգիտի, թե ինչ է «էներգետիկ անվտանգությունը»: (*Գծապատկեր 3.12*):

Գծապատկեր 3.11. Ծանոթ եք Հայաստանում գործող վերականգնվող էներգիայի կիրառությունը խթանող օրենսդրական կարգավորումներին


n=1100



■ Այո ■ Ոչ

**Գծապատկեր 3.12. Ձեր կարծիքով, Հայաստանը էներգետիկ անվտանգության
խնդիր ունի՞**

n=1100




ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ



ԲԱԺԻՆ 4. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ


Հարցված հայաստանցիների 94%-ի կարծիքով, մոտ ժամանակներում ղարաբաղյան հակամարտության լուծումը կարևոր է Հայաստանի ապագայի համար: Սակայն, կարգավորման ինչպիսի՞ լուծումներ են տեսնում հարցվածները: Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 4.1-ը*, հարցված հայաստանցիների ամենամեծ բաժինը՝ մոտ մեկ երրորդը (30%), ղարաբաղյան հակամարտության լուծման ճանապարհը տեսնում է փոխզիջումների միջոցով: Հարցվածների մեկ քառորդը (25%) խնդրի կարգավորումը հնարավոր է համարում ստատուս քվոյի պահպանման, իսկ 15%-ը՝ Նոր պատերազմի միջոցով: Հարցվածների 22%-ը դժվարացել է պատասխանել, թե ինչպես է պատկերացնում խնդրի լուծումը:

Գծապատկեր 4.1. Ինչպե՞ս եք պատկերացնում ղարաբաղյան հակամարտության լուծման ճանապարհը
n=1100




Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 4.2-ը*, հարցվածների մեծամասնությունը (60%) լիովին, իսկ 17%-ը որոշ չափով համաձայն է, որ ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի ոչ թե ռազմական ուժի, այլ բանակցությունների միջոցով: Այս մտքի հետ համաձայն չեն հարցվածների 12%-ը («Որոշ չափով համաձայն չեմ» և «Բոլորովին համաձայն չեմ» պատասխանների հանրագումարը):

Գծապատկեր 4.2 Ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի բանակցությունների միջոցով



Ըստ *Գծապատկեր 4.3-ի*, հարցվածների մոտ կեսը (47%) լիովին համաձայն է, որ Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում Հայաստանը հույսը պետք է դնի միայն իր վրա: Այս մտքի հետ որոշ չափով համաձայնել է հարցվածների 22%-ը, իսկ համաձայն չէ 17%-ը («Որոշ չափով համաձայն չեմ» և «Բոլորովին համաձայն չեմ» պատասխանների հանրագումարը):

Գծապատկեր 4.3. Ղարաբաղյան հակամարտության հարցում Հայաստանը հույսը պետք է դնի միայն իր վրա




Արդյո՞ք հնարավոր է Ղարաբաղյան հակամարտության այնպիսի կարգավորում, որը միաժամանակ ընդունելի լինի Հայաստանի, Արցախի և Ադրբեյջանի ժողովուրդների համար: Ըստ *Գծապատկեր 4.4-ի*, հարցվածների միայն մեկ երրորդն է (33%) հնարավոր համարում կարգավորման նման տարբերակ:

Հարցվածների ավելի մեծ բաժինը (44%) չի կարծում, թե նման լուծում հնարավոր է, իսկ 22%-ը դժվարանում է պատասխանել այս հարցին:

Գծապատկեր 4.4. Հնարավոր է դարաբաղյան հակամարտության այնպիսի կարգավորում, որը միաժամանակ ընդունելի լինի Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի ժողովուրդների համար

n=1100



Ումի՞ց է կախված դարաբաղյան հակամարտության կարգավորումը: Այս հարցին պատասխանելիս, հարցվածներն ունեցել են մինչև 3 պատասխան տալու հնարավորություն: Ըստ *Գծապատկեր 4.5-ի*, հարցվածների 39%-ի և 31%-ի կարծիքով, դարաբաղյան հակամարտության կարգավորումը կախված է համապատասխանաբար Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններից: Հարցվածների ավելի փոքր բաժինն է հակամարտության կարգավորումը կապել արտաքին խաղացողների կամքի հետ. մասնավորապես, 24%-ը նշել է համաշխարհային գերտերությունների (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, ԵՄ) և 21%-ը՝ Ռուսաստանի Դաշնության անունները:


Գծապատկեր 4.5. Ումի՞ց է կախված ղարաբաղյան հակամարտության կարգավորումը [Մինչև 3 պատասխանի հնարավորություն] (Հարցվածները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)

n=1100




Հարցված հայաստանցիների մոտ երկու երրորդի կարծիքով (68%), ժողովուրդներին հնարավոր է խաղաղության նախապատրաստել, իսկ 23%-ի կարծիքով՝ ոչ (Գծապատկեր 4.6): Ինչ վերաբերում է խաղաղության նախապատրաստելու ձևերին, նախորդ հարցին դրական պատասխանաձևերի 37%-ը տվել է «Եթե երկու երկրների կառավարություններն այդպես որոշեն» պատասխանը: Ավելի փոքր բաժինը՝ 29%-ն ասել է, որ ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելը հնարավոր կլինի, եթե Ադրբեջանի իշխանությունները հրաժարվեն ռազմական հռետորաբանությունից և 21%-ը՝ եթե միջազգային հանրությունն ավելի շատ ջանքեր ներդնի (Գծապատկեր 4.7):

Գծապատկեր 4.6. Հնարավոր է ժողովուրդներին նախապատրաստել խաղաղության
n=1100



Գծապատկեր 4.7. Ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու եղանակները
n=748




ԿՐԹՈՒԹՅՈՒՆ




ԲԱԺԻՆ 5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Այն հարցին թե արդյո՞ք համավարակի տարածման ժամանակահատվածում մասնակցել են հեռավար դասերին, հեռավար կրթությանն առնչություն ունեցած հարցվածների երեք քառորդից ավելին (79%) տվել է դրական պատասխան, իսկ ավելի քիչ՝ 10%-ը մասնակցել է մասամբ: Ընդ որում, հեռավար կրթության մասնակցած հարցվածների 75%-ը կանայք են, 26%-ը տղամարդիկ⁸ (*Գծապատկեր 5.2*):

Գծապատկեր 5.1. Մասնակցե՞լ եք արդյոք հեռավար դասերին համավարակի ժամանակ




Գծապատկեր 5.2. Մասնակցե՞լ եք արդյոք հեռավար դասերին համավարակի ժամանակ ըստ սեռի



⁸ χ^2 (df =3, N= 416) = 30.742, p=.000


Ըստ *Գծապատկեր 5.3-ի*, հեռավար կրթությանը մասնակցած հարցվածների 42%-ի համար դասերին մասնակցելու համար խոչընդոտ է հանդիսացել ինտերնետի բացակայությունը կամ ցածր որակը, 23%-ի համար՝ համապատասխան տեխնիկայի բացակայությունը, 19%-ի համար՝ առողջական խնդիրները, և ևս 19%-ի համար՝ առանձնանալու հնարավորության բացակայությունը:

Գծապատկեր 5.3. Ի՞նչ դժվարությունների/խոչընդոտների եք հանդիպել հեռավար կրթության կազմակերպման/հեռավար կրթությունից օգտվելու ընթացքում [Նշեք բոլոր հնարավոր տարբերակները] (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են):




Գծապատկեր 5.4-ը ցույց է տալիս, որ հարցվածների 52%-ի դասը/դասախոսությունը բովանդակային փոփոխություն է կրել հեռավար լինելու պատճառով: Մասնավորապես, այսպես պատասխանած հարցվածների 53%-ը նշել է, որ շեշտն ավելի շատ ինքնուրույն աշխատանքի վրա է դրվել, իսկ 33%-ը նշել է, որ կրճատվել են առաջադրանքները (*Գծապատկեր 5.5*):

Գծապատկեր 5.4. Արդյո՞ք Ձեր մասնակցությամբ դասը/դասախոսությունը բովանդակային փոփոխություններ կրել է հեռավար լինելու պատճառով:
n=371




Գծապատկեր 5.5. Եթե այո, ապա ինչպե՞ս (Նշեք բոլոր ինտրապոր տարբերակները) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են):
n=193



Ըստ *Գծապատկեր 5.6-ի*, հարցվածների 41%-ը հեռավար կրթության առավելություններ չեն տեսնում: Հարցվածների մոտ մեկ քառորդը (23%) հեռավար կրթության առավելություն է համարում ծնողի/ծնողների վերահսկողությունը/օգնությունը, 20%-ը՝ ժամանակի և 17%-ը՝ գումարի խնայումը:

Գծապատկեր 5.6. Որո՞նք են ըստ Ձեզ հեռավար կրթության առավելությունները [Նշեք երեք հիմնական առավելություն] (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են)
n=392



Միևնույն ժամանակ, ըստ *Գծապատկեր 5.7-ի*, հարցվածների 31%-ը որպես հեռավար կրթության թերություն նշել է կենտրոնանալու խնդիրը, իսկ 27%-ը գտնում է, որ հեռավար կրթության ժամանակ յուրաքանչյուր աշակերտին/ուսանողին ավելի քիչ ժամանակ է տրամադրվում: Հարցվածների ևս

27%-ը կարծում է, որ հեռավար կրթության պայմաններում վերահսկողությունը թույլ է, և աշակերտները/ուսանողները խաբեություններ են թույլ տալիս:


Գծապատկեր 5.7. Ըստ Ձեզ, որո՞նք են հեռավար կրթության թերությունները
 [Նշեք երեք հիմնական թերություն] Նշեք երեք հիմնական թերություն (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են)
 n=392



Հարցվածների կեսից ավելին (55%) չի կարծում, թե հեռավար կրթությունը նոր հմտություններ ստանալու հնարավորություն է տվել իրենց կամ իրենց


երեխաներին, մինչդեռ 39%-ի փորձառությունն այս առումով դրական է (Գծապատկեր 5.8):

Գծապատկեր 5.8. Արդյո՞ք հեռավար կրթությունը նոր հմտություններ ստանալու հնարավորություն տվել է Ձեզ/Ձեր երեխային/երեխաներին
n=392



Կցանկանալի՞ք, որ համավարակը հաղթահարելուց հետո հեռավար կրթության տարրեր պահպանվեին դասապրոցեսում: Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 5.9-ը, հարցվածների երկու երրորդը (65%) այս հարցին բացասական պատասխան է տվել: Հեռավար կրթության տարրերի պահպանման հեռանկարի հետ համաձայնել է հարցվածների 33%-ը («Այո» և «Մասամբ» պատասխանների հանրագումարը):

Գծապատկեր 5.9. Կցանկանալի՞ք, որ համավարակը հաղթահարելուց հետո հեռավար կրթության տարրեր պահպանվեին դասապրոցեսում
n=392



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առողջապահություն

- Հարցվածների 44%-ը համարում է, որ նոր տիպի կորոնավիրուսը գլոբալ համավարակ է և սպառնալիք միլիոնավոր մարդկանց կյանքի և առողջության համար:
- Ըստ հարցման մասնակիցների 76%-ի, համավարակի պայմաններում կառավարության համար առաջնահերթ պետք է լինի առողջապահությունն ու բնակչության առողջությունը, չնայած այն հանգամանքին, որ կտուժի տնտեսությունը:
- Հարցվածների 68%-ը բավարարված է համավարակի ժամանակ Հայաստանի Առողջապահության նախարարության աշխատանքից:
- Հարցման մասնակիցների մոտ կեսը (53%) գտնում է, որ Հայաստանի բնակչությունը կարգապահ չէր համավարակի ընթացքում:
